

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	Դսեղ
ՄԱՐԶ	Լոռի



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Դսեղ, գյուղ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում: Գյուղն ըստ բազմաթիվ հավաստի աղբյուրների, հիմնադրվել է դեռևս մ.թ.ա., որի վերաբերյալ կան գիտական հիմնավորումներ ունեցող տվյալներ: Գյուղի տարածքում կա չորս [եկեղեցի](#): Ամենամեծը Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր եկեղեցին է՝ կառուցված 13-րդ դարում Մամիկոնյանների տոհմի կողմից գյուղի հյուսիսային նույնանուն ձորում (գտնվում է կիսաքանդ վիճակում): Գյուղի հին մեծ գերեզմանատանն են գտնվում 645 թվականին կառուցված համեմատաբար փոքր միանավ եկեղեցու ավերակները:

Դեբեղի ձորում՝ գյուղի արևմտյան կողմում, կիսաքանդ վիճակում կանգնած է Քառասնից Մանկաց եկեղեցին: Ըստ ճակատի արձանագրության՝ օծվել է [1256](#) թվականին Հաղպատի վանքի վանահայր Համագասպի կողմից: Գյուղի տարածքում կա չորս մատուռ: Կանգուն են մնացել Սուրբ Սարգիս և Դդի գլխի Բալա Գիքորի կառուցած մատուռները:

Գյուղի կենտրոնում՝ Թումանյանի տուն թանգարանի հարևանությամբ, գտնվում է գործող եկեղեցին: Սկզբնական շինությունից մնացած մասերը վերագրվում են [VII դարին](#): Եկեղեցին մի քանի անգամ ենթարկվել է վերանորոգման, իսկ [20-րդ դարի](#) սկզբին՝ վերակառուցման:

Գյուղի շրջակայքում կան նաև [քարանձավներ](#), որոնք օգտագործվել են մարդկանց կողմից հնագույն ժամանակներից ի վեր որպես կացարան, իսկ հետագայում միայն անասունների համար: Դրանցից են «Դռնավոր էրը», Ծակ քարը և գյուղից Ձորագետ իջնելու Մուտի աջ կողմի ցածր քարայրը, որը կրում է նաև մարդու կողմից հարմարեցման հետքեր: Գյուղից հարավ արևելյան կողմի Ծովաքար կոչվող սարի ստորոտում է գտնվում «Ծովեր» կոչվող գեղեցիկ [լիճը](#): Սովետական կարգերի ժամանակ այն մտնում էր ոռոգման համակարգի մեջ:

Գյուղի կենտրոնական հրապարակի վրա է գտնվում մշակույթի տունը՝ 250 տեղանոց դահլիճով և 11000 գիրք ունեցող գրադարանով, ինչպես նաև Հովհաննես Թումանյանի բրոնզյա արձանը:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ամենայն հայոց բանաստեղծն այսպես է բնութագրել իր հայրենի գյուղը. «Դսեղը յուր անառիկ ու չքնաղ դիրքով նման է մի բնակերտ ամրոցի: Նրա փոքրիկ հարթավայրը շրջափակված ու ամրացված է հարավից՝ անտառապատ սարերով, իսկ մնացած երեք կողմերից՝ խոր ձորերով»:

Դսեղը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Դեբեղ գետի աջափնյա սարահարթի վրա: Բնակավայրի հեռավորությունը Վանաձոր մարզկենտրոնից 30 կմ է, Երևանից՝ 150 կմ, միջպետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրուղու Վանաձոր-Ալավերդի հատվածից՝ 8 կմ, Երևան-Թբիլիսի երկաթուղու «Թումանյան» կայարանից՝ 10 կիլոմետր է: Գյուղը հյուսիսից սահմանակցում է Քարինջի, Թումանյանի և Ծաթերի համայնքային հողերին, արևելքից՝ Դսեղի անտառտնտեսության, իսկ արևմուտքից՝ Գուգարքի անտառտնտեսության հողերին: Համայնքի վարչական տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 829-2186 մ բարձրության վրա, որը և հանգեցրել է կլիմայական պայմանների ընդգծված տարբերության ներքին, միջին և վերին հատվածներում: Ըստ Օձունի օդերևութաբանական կայանի գրանցումների՝ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները հունվարին կարող են լինել +18, -28, մայիսին՝ +32, -3, օգոստոսին +37, +3, հոկտեմբերին +31, -10 աստիճան: Դսեղի

հանդի սահմանները հարավից սկսվում են զովասուն բարձր լեռներով, հյուսիսում վերջանում են անդնդախոր ձորերով: Դսեղն աչքի է ընկնում համեմատաբար մեղմ և խոնավ կլիմայով: Տարվա մեծ մասը գյուղը ենթարկվում է Միջերկրական և Սև ծովերի խոնավ օդային զանգվածների հոսքին, որոնք բերում են առատ տեղումներ: Տեղումների քանակը մեծ է մայիս-հունիս ամիսներին: Ամռանը և աշնան երկրորդ կեսին Դսեղում գերակշռում է ցածր խոնավությամբ տաք օդը: Դսեղը Հայաստանի հնագույն և հանրահայտ գյուղերից է: Գոյություն ունի Դսեղ անվան ստուգաբանության հետ կապված երկու տարբերակ. Դսեղ նշանակում է դուրս տեղ, այսինքն՝ բնակավայրից զատված, առանձնացված տեղ, բ/ ըստ ավանդազրույցի՝ ձորի գյուղերից տարբերելու համար սարահարթի գյուղը կոչել են Դրսի գեղ կամ Դսեղ: Գյուղն, ըստ գիտական հիմնավորումների, հիմնադրվել է դեռևս մ.թ.ա.: Գյուղի շրջակայքում կան քարանձավներ՝ Դռնավոր էրը», Ծակ քարը և գյուղից Ձորագես իջնելու Մուտի աջ կողմի ցածր քարայրը, որոնք հնագույն ժամանակներում մարդիկ օգտագործել են որպես կացարան, իսկ հետագայում օգտագործվել են միայն անասունների համար: Դսեղ անունն առաջին անգամ հիշատակվում է 15-րդ դարի սկզբին: Հակոբ Գ Սսեցի կաթողիկոսը 1404-1411թթ. Դսեղը հիշատակում է սանահինի հարկատուների ցուցակում:

Գյուղը հարուստ է բազմապիսի հուշարձաններով՝ վանքային համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, կոթողներ, կացարանների մնացորդներ, միջնադարյան գերեզմանոցներ և այլն: Գյուղի անցյալը սերտորեն կապվում է Մամիկոնյան նշանավոր տոհմի շինարարական և բարենորոգչական գործունեության հետ: Գյուղի տարածքում կան բազմաթիվ արժեքավոր խաչքարեր, մատուռներ, եկեղեցիներ: 19-րդ դարի II կեսի պեղումների և 1967-69թթ. գյուղի ներկայիս կենտրոնի կառուցապատման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են Ք. ա. X-IXդ.դ. և VIII-VIդ.դ. գերեզմաններ և բրոնզե դարի կենցաղային իրեր: Պահպանվել են նաև վաղ միջնադարին վերագրվող բաղնիքի խճանկար հատակը, բազիլիկ եկեղեցու (654թ.) ավերակները՝ ազգագրական թանգարանով, Մամիկոնյան իշխանների հիմնադրած և XIXդ. վերակառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, խաչքարերով և կոթողով գերեզմանատունը (VII-XIIIդ.դ.), խաչարձաններ (XIդ.): Գյուղի անմիջական հարևանությամբ են գտնվում Քառասունից Մանկանց (X-XIդ.դ.), և Մամիկոնյանների հիմնադրած Բարձրաքաջ Ս. Գրիգոր (XII-XIIIդ.դ.) վանքերը, Սիրուն խաչ խաչքարը (XIIIդ.): Գյուղում գտնվող գերեզմանատանը կան բազում այլ խաչքարեր, հուշակոթող և 7-րդ դարի մի փոքր բազիլիկ եկեղեցու ավերակները: Գյուղի տարածքում կա չորս մատուռ, որից կանգուն են մնացել Սբ. Սարգիս և Դղի գլխի Բալա Գիքորի կառուցած մատուռները:

Դսեղը մեծանուն հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի (1869-1923) ծննդավայրն է, և նրա հայրենի տանը գործում է վերջինիս տուն-թանգարանը: Գյուղի կենտրոնում վեր է խոյանում բրոնզաձույլ արձանը (հեղինակ Ղ. Չուբարյան): Գյուղի կենտրոնում՝ Թումանյանի տուն թանգարանի հարևանությամբ գտնվում է գործող եկեղեցին: Սկզբնական շինությունից մնացած մասերը վերագրվում են VII դարին: Եկեղեցին մի քանի անգամ վերանորոգվել է, իսկ 20-րդ դարի սկզբին վերակառուցվել է: Գյուղի հարավ-արևելքում գտնվող Ծովաքար կոչվող սարի ստորոտում է գտնվում «Ծովեր» կոչվող գեղեցիկ լիճը: Խորհրդային շրջանում այն մտնում էր ոռոգման համակարգի մեջ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	+18, -28
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	+37, +3

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	-
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյան
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	150
3.2) մարզկենտրոնից (կմ)	30
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	30
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	8
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	-
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	829-2186
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	7922,34
6. Սահմանակից համայնքների անվանումները	Չկալով, Դեբեդ, Մարց, Ձաղիձոր
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	dsegh.lori@mta.gov.am , dsegh.tim@gmail.com
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.dseghlori.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093-50-43-92
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	098-01-60-90
11. Համայնքի հեռախոսային կոդը	0253
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	Այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1718
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2062
2. Գրանցված ծնունդների քանակը	30
2. Մահացության դեպքերի քանակը	25
3. Ամուսնությունների քանակը	12
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	701
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	92
7. Կենսաթոշակառուների քանակը	423

8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	79
---	----

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	2
2. Արվեստի դպրոցների քանակը	-
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	-
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	730

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	7922,34
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	5039,59
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	184,62
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1556
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	205
7. Խոզերի գլուխաքանակը	924
8. Գյուղատնտեսական տեխնիկա	
8.1 տրակտորներ (քանակը)	
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	-

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	5
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո
5. Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	
6.2 Էքսկավատորների քանակը	2
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	0
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	1
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	50524.8	49223.2
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	15209.9	13909.1
2.1 հողի հարկ	7903.9	
2.2 գույքահարկ	5203.5	
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	55314.1	
3.1 դոտացիա	35314.1	
3.2 սուբվենցիա	20000.0	20000.0
4. Մուտքեր հողի օտարումից	6712.3	6712.3

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	50524.8	70286.1

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	20000.0	20000.0

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված	Փաստացի

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

	բյուջե	
1. Ընդամենը ծախսեր	26432.2	23918.9

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդորից՝	15
1.1 համայնքային ծառայողներ	6
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	
3. Ավագանու անդամների թվաքանակը	7

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
1. Դսեղ համայնքի դպրոցի ճանապարհի ասֆալտապատում:	Համայնքի միջոցների ներդրմամբ և կառավարության աջակցությամբ հիմնախնդիրների լուծում:
2. Դսեղ համայնքում փողոցների գիշերային լուսավորության անցկացում	
3. Հրապարակից մանկապարտեզ տանող ճանապարհի հիմնանորոգում	